ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը որոշեց.

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Լ-15 և ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Լ-35 ծածկագրերով ընթացակարգերի մասնակից «Մուրադյան Շին 86» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Որոշման հիմք է հանդիսացել ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից կատարված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Լ-15 և ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Լ-35 ծածկագրերով գնման ընթացակարգերի վերլուծության արդյունքում պարզված հանգամանքները: Մասնավորապես՝ տեղեկագրում 2024 թվականի մարտի 1-ին և ապրիլի 30-ին հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարությունների համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Մուրադյան Շին 86» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00520489, այսուհետ՝ Ընկերություն):

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր (2023 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 2-ը) և տնօրեն է (2023 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2024 թվականի հունիսի 19-ը) հանդիսացել Սուսաննա Սիմավոնի Պողոսյանը:

Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ Մուրադյան «Շին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00482864) 2023 թվականի հունիսի 30-ից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Սուսաննա Սիմավոնի Պողոսյանի և Մուրադյան «Շին» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Սուսաննա Սիմավոնի Պողոսյանը հանդիսանում է Մուրադյան «Շին» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Էդգար Արմենի Մուրադյանի ամուսինը՝ համաձայն ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության ամուսնության պետական գրանցման մասին տեղեկանքի:

Այսպես՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ...:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու

ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Համաձայն Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

բ) նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ) նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

Կարգի 120-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 119-րդ կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, <u>ամուսինը,</u> ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Ընթացակարգի հրավերի մաս 1-ի 8.14 կետի համաձայն՝ «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)»:

Պայմանագրերը միակողմանի ամբողջությամբ կամ մասնակի չեն լուծվել, քանի որ վերջինիս կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ կատարված են:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՖԻԴԱՆՅԱՆ**

« 03 » « 09 » 2024թ.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Մուրադյան Շին 86» ՍՊԸ	**00520489**	**Ք. Երևան, Վարդաշեն 9 փ. 62դ, շ 2բ**	**Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի:**			**- ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/L-15** **- ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/L-35** **Պատվիրատուի ղեկավարի « 03 » « 09» 2024թ. որոշման համաձայն**